ԱՐԵՎԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրավական պետության գաղափարն իր արմատներով սկիզբ է առնում հին ժամանակներից: Հատկանշական է, որ իրավական պետության արագ զարգացող գաղափարի հետ կապված էին լավագույն կյանքի հասնելու որոշակի հույսեր: Դա մտածողներին մղում էր որոնելու հասարակական կյանքի կազմակերպման առավել կատարյալ ձևեր, պետական կառավարման կառուցակարգի կազմավորման լավագույն միաժամանակ՝ ամենաբարենպաստ ուղիներ: Այդ ժամանակներից սկսած այս հիմնահարցը մնացել է իբրև օրախնդիր հարց մարդկության համար:

Փորձենք ոչ ավանդական ձևով ներկայացնել իրավական պետության վերաբերյալ այն հիմնական և գլխավոր հետևությունները, որոնց հանգել ենք տեսական և գործնական ուսումնասիրությունների արդյունքում:

Իրավական պետության գործառույթները բաժանվում են ներքին և արտաքին գործառույթների:

Իրավական պետության ներքին գործառույթներին են դասվում՝

- քաղաքացիների իրավունքների ու ազատությունների պահպանումը, նրանց իրավահավասարության ապահովումը, օրինականության հիման վրա հանրության շահերի պաշտպանությունը.
- հանրության, քաղաքացիների շահերն արտահայտող սեփականության տարբեր ձևերի հավասար պաշտպանությունը.
- մենաշնորհը բացառող շուկայական տնտեսության զարգացման ապահովումը.

- քաղաքացիների աշխատանքի պաշտպանության պայմանների բարելավումը.

- հոգևոր արժեքների պահպանումը, բազմապատկումը՝ ի շահ քաղաքացիների:

Իրավական պետության արտաքին գործառույթներին են դասվում՝

- հանուն խաղաղության և խաղաղ համագոյակցության պայքարը.

- արտաքին հարձակումներից երկրի պաշտպանությունը.

- համաշխարհային ընկերակցության երկրների հետ տնտեսական և մշակութային համագործակցությունը.

- աշխարհի երկրների հետ շրջակա միջավայրի պաշտպանության, մարդկության գոյապահպանման ուղղությամբ տարատեսակ համագործակցությունը:

Իրավական պետության գործառույթների միասնության հիմքում ընկած է քաղաքացիական հասարակության կամքը: Իրավական պետության գործառույթների միասնությունն արտահայտվում է նախ և առաջ նրանում, որ դրանք իրականացվում են գործող օրենսդրությանը խիստ համապատասխան, իրացվում են համապատասխան ձևերով և համակցվում են քաղաքացիների իրավունքների ու ազատությունների, նրանց իրավահավասարության հետ: Բացի դրանից, դրանք հիմնվում են մարդու իրավունքների մասին միջազգային ակտերի վրա, որը նույնպես վկայում է դրանց միասնության մասին:

Մարդու իրավունքները և ազատությունները, նրա պատիվն ու արժանապատվությունը պետք է իրավական պետության սահմանադրությամբ հռչակվեն բարձրագույն արժեքներ:

Իրավական պետության սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի հիմունքները ենթադրում են՝

- մարդու իրավունքներին վերաբերող միջազգային ակտերը տվյալ պետության օրենքների նկատմամբ ունեն գերակայություն.

- մարդուն իրավունքներից և ազատություններից զրկելու և դրանք սահմանափակելու անթույլատրելիություն.

- օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարություն.

- մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանադրական երաշխավորվածություն.

- սահմանադրական կարգի, այլոց իրավունքների և ազատությունների նկատմամբ ոտնձգությունների նպատակով իրավունքների և ազատությունների գործադրման անթույլատրելիություն:

Իրավական պետության մեջ կարևոր նշանակություն ունի անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային տարրերի, դրանց սահմանադրական և փաստացի կարգավիճակի որոշումը:

Իրավական պետության մեջ անձի իրավական կարգավիճակը ձևավորվում է հետևյալ կառուցվածքային տարրերից՝

- քաղաքացիական և քաղաքական իրավունքներ և ազատություններ.
- տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ ու ազատություններ.
- պարտականություններ.
- իրավունքների և ազատությունների երաշխիքներ:

Իրավական պետությանն անհրաժեշտ է տարբեր բնագավառներում ձեռնարկել առանձնահատուկ և որոշակի միջոցներ՝ ռասայական խտրականության իսպառ վերացման նպատակով, այն դատապարտել և ամեն տեսակի խտրականություն հայտարարել օրենքով պատժելի:

Իրավական պետությունը ոչ միայն պետք է դատապարտի պատերազմական հանցագործությունները և մարդկության հանդեպ գործած ոճիրները, այլ նաև պետք է ընդունի տվյալ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետի չտարածման, դրանց իրականացման գործում մեղավոր անձանց դատական հետապնդման և պատժման, այն պետությանն այդ անձանց հանձնման վերաբերյալ հատուկ որոշումներ, որի տարածքում կատարվել են այդ հանցագործությունները:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացման ուղղությամբ իրավական պետության ներքին քաղաքականությունը պետք է հիմնվի՝

- ժողովուրդների ինքնորոշման իրավունքն ամրագրող միջազգային ակտերի վրա.
- պետության տարածքում ապրող բոլոր ժողովուրդների իրավունքների նկատմամբ հարգանքի վրա.
- պետության տարածքում ապրող բոլոր ժողովուրդների կամքի վրա.

- ժողովուրդների ինքնորոշման իրավունքը հաստատող պայմանագրի վրա հանձինս այդ պայմանագիրը կնքած նրանց ազգային-պետական միավորումների.

- ազգային-պետական միավորման ժողովուրդների ինքնորոշման իրավունքի այս կամ այն ձևով ճանաչման վրա:

Բացառիկ կարևոր է իրավական պետության դերն այլ երկրներում ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ապահովման գործում:

Ելնելով ժողովուրդների ինքնորոշման հանրաճանաչ իրավունքից և ղեկավարվելով միջազգային համաձայնագրերով, իրավական պետությունը՝

- .կոչված է խրախուսելու ժողովուրդների ինքնորոշման իրավունքը.

- պարտավորվում է անհատական կարգով և միջազգային օգնության և համագործակցության կարգով օժանդակություն ցույց տալ ժողովուրդների կողմից ինքնորոշման իրավունքի իրականացման գործում.

- պետք է մասնակցի այն պետությունների նկատմամբ միջազգային պատժամիջոցների կիրառմանը, որոնք խոչընդոտում են ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրականացմանը.

- ինչպես միջազգային համաձայնագրի մյուս մասնակիցները, նա ևս պատասխանատվություն է կրում ոչ ինքնակառավարվող և իր հովանավորության տակ գտնվող տարածքների կառավարման համար և պետք է նպաստի այդ տարածքներում ապրող ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրականացմանը:

Իրավունքի տեսության հայեցակարգային հարցերից մեկն է հանդիսանում հասարակության առաջընթացը, ժողովրդավարական զարգացման ապահովման գործում իրավական պետության արդյունավետ դերի և դրա սահմանների կանխորոշումը:

Իրավական պետության արդյունավետ դերը կայանում է այնպիսի իրավական ակտերի ընդունման և իրականացման խնդրում, որոնք ունակ են խթանել հասարակության մեջ գործող ժողովրդավարական ինստիտուտների զարգացումը և կայունությունը, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների պաշտպանության, նրանց սոցիալական պաշտպանվածության ուղղությամբ գործուն միջոցների ձեռնարկման, քաղաքացիների անօտարելի իրավունքների ու

ազատությունների նկատմամբ ոտնձգություններ կատարած պաշտոնատար անձանց իրավաբանական պատասխանատվության ենթարկելու իրավական կառուցակարգերի մշակման և իրագործման խնդրում:

Իրավական պետության արդյունավետ դերն ապահովվում է պետական ապարատի բոլոր օղակների հստակ և ճնավորված աշխատանքով, իրավական պետության մարմինների իրավաստեղծ և իրավակիրառական գործունեության արգասավորությամբ, իշխանությունների տարանջատման սկզբունքի անշեղորեն կենսագործմամբ, ժողովրդավարական պետահիրավական և քաղաքական ինստիտուտների կայունությամբ, ազատ շուկայական տնտեսությամբ:

Իրավական պետության արդյունավետ գործունեության սահմանները պայմանավորված են հասարակական հարաբերությունների այն միջավայրով, որոնք ունեն իրավական նշանակություն և հանդիսանում են իրավական պետության գործունեության դաշտ:

Իրավական պետության արդյունավետ գործունեության սահմանները որոշվում են նաև օրենքներով:

Իրավական պետությունը պետք է լինի մարդու իրավունքներին վերաբերող միջազգային պայմանագրերի սուբյեկտ: Նա պարտավոր է մասնակցել՝

- մարդու իրավունքներին վերաբերող միջազգային համաձայնագրերին.
- ազգերի, ազգությունների և էթնիկական խմբերի իրավունքներն ու ազատությունները, նրանց տնտեսական, սոցիալական, քաղաքական ու մշակութային և այլ ազատ զարգացումն ապահովող միջազգային պայմանագրերին.
- այս կամ այն երկրում մարդու իրավունքների զանգվածային խախտումների դեմ ուղղված միջազգային գործողություններին՝ քաղաքական, տնտեսական և, անհրաժեշտության դեպքում, ռազմական պատժամիջոցների գործադրմամբ.
- միջազգային ակտերին՝ ի պաշտպանություն իրենց երկրներում այլախոհության և քաղաքական համոզմունքների համար հետապնդված անհատների առանձին կատեգորիաների իրավունքների.
- միջազգային պաշտպանության կարիք ունեցող անհատների իրավական կարգավիճակի հարցերի մշակման և լուծման հետ կապված միջազգային

համաձայնագրերին:

Իրավական պետության գոյության կարևորագույն չափանիշը՝ ժողովրդավարական վարչակարգն է: Այն ենթադրում է իրավական պետությունում քաղաքական իշխանության իրագործման հետևյալ մեթոդները՝ համոզման և հարկադրման:

Համոզման մեթոդի բովանդակությունը կազմում են՝

- մարդկանց դաստիարակումն իրավունքի, պետության, օրենսդրության հանդեպ հարգանքի զգացումով.

- հասարակության առաջընթաց զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ իրավական միջոցների ձեռնարկման անհրաժեշտության մասին պարզաբանումը.

- հասարակական գիտելիքների քարոզչությունը, հարգանքը մարդու և քաղաքացու իրավունքների հանդեպ.

- քաղաքացիների իրավական դաստիարակության բարձրացման ուղղությամբ կազմակերպական միջոցառումների իրականացումը.

- ընդունված օրենսդրական ակտերի լայնորեն պարզաբանումը քաղաքացիների շրջանում.

- գործող օրենսդրությանը խիստ համապատասխան պետական ներգործության միջոցների ձեռնարկումը.

- պետության պատժիչ միջոցների իրականացման գործընթացում կամայականության և անօրինականության անթույլատրելիությունը.

- մեղավոր անձանց իրավաբանական պատասխանատվության ենթարկման խստիվ սահմանված դատավարական կարգի պահպանումը.

- պետական հարկադրման իրականացումը՝ դրա համար հատուկ լիազորված պետական մարմինների կողմից:

Իրավական պետության էության պարզաբանման համար անհրաժեշտ է անդրադառնալ նրա կառուցակարգի բովանդակությանը:

Իրավական պետության կառուցակարգը հանդիսանում է նրա լինելիության միջոց: Այդ կառուցակարգի օգնությամբ են իրականացվում իրավական պետության գործառույթները: Իրավական պետության կառուցակարգի բոլոր կառուցվածքային տարրերը գործում են իշխանությունների տարանջատման

սկզբունքի հիման վրա՝ իր նպատակային նշանակությանը խստիվ համապատասխան:

Իրավական պետության՝ իշխանական լիազորություններով օժտված կառուցվածքային տարրերը՝ իրենց գործունեության յուրահատուկ ձևում, ամբողջ հասարակության արդյունք են: Նրանք իրենց ամբողջ գործունեությունը խստիվ համապատասխանեցնում են գործող օրենսդրությանը:

Պաշտոնատար անձինք անձնական պատասխանատվություն են կրում սահմանադրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով երաշխավորված՝ քաղաքացիների իրավունքների ու ազատությունների նկատմամբ ոտնձգությունների համար: Քաղաքացիների իրավունքներն ու ազատություններն ապահովվում են իրավական պետության մարմինների կողմից:

Իրավական պետությունն օժտված է մի շարք յուրահատուկ սկզբունքներով: Իրավական պետության հատկանիշների համակարգային որոշակիությունը՝ դա նրանց ամբողջական միասնությունն է՝ պայմանավորված քաղաքացիական հասարակությամբ: Ինչպիսի՞ն է այդ հատկանիշների բնույթը:

Իրավական պետությունը՝ դա ամենից առաջ այն պետությունն է, որը հիմնված է օրենքի գերակայության վրա: Միաժամանակ, այն ենթադրում է բոլոր քաղաքացիների, պաշտոնատար անձանց, պետության մարմինների և կազմակերպությունների կողմից պետության օրենքների անշեղորեն կատարում ու պահպանում, և նախատեսում է քաղաքացիների ու պետության փոխադարձ պատասխանատվություն՝ գործող օրենսդրության շրջանակներում: Իրավական պետության մյուս կարևորագույն հատկանիշների թվին են դասվում հետևյալները՝

- հիմնվում է քաղաքական, գաղափարախոսական և տնտեսական բազմակարծության վրա, որոնք ամրագրվում և երաշխավորվում են պետության նորմատիվ իրավական ակտերով.
- ապահովում է իրավական քաղաքացիական հասարակության գործառնության համար անհրաժեշտ՝ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները:

Իրավական պետությունն իրականացնում է քաղաքացիական հասարակության սահմանադրական ամրագրումը:

Քաղաքացիական հասարակության հիմունքները ենթադրում են՝

- սեփականության բոլոր ձևերի ճանաչումը և հավասարաչափ պաշտպանումը.

- ազատ տնտեսական գործունեությունը, մրցակցության պաշտպանումը.

- հասարակական միավորումների ազատ գործունեությունը, օրենքի առջև նրանց հավասարությունը.

- օրենքի առջև կրոնական միավորումների հավասարությունը, դավանանքի ազատությունը.

- աշխատանքի պաշտպանությունը, կենսանվազագույնի որոշումը, վարձատրության նվազագույն մակարդակի սահմանումը.

- ընտանիքին, մայրությանը, հայրությանը և մանկությանը սատարելը.

- կրթության, գիտության և մշակույթի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը.

- սոցիալական պաշտպանվածության երաշխիքները:

Այդ ամենն պետք է ապահովել իրավական և փաստացի երաշխիքներով:

Իրավական պետության կարևորագույն ինստիտուտներից մեկն է հանդիսանում մարդու և քաղաքացիների իրավունքների ու ազատությունների ինստիտուտը:

Իրավական պետության մեջ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ինստիտուտների հիմնական բնութագրերն այսպիսին են՝

- մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների լիակատար համապատասխանությունը միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին.

- մարդու այն իրավունքների և ազատությունների անմիջականորեն գործող բնույթը, որոնք կանխորոշում են օրենքների իմաստը, բովանդակությունը և կիրառումը.

- օրենքի առջև բոլորի հավասար լինելը, դրա իրավական և փաստացի երաշխավորվածությունը.

- սահմանադրությանը, միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան՝ էթնիկական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ու ազատությունների երաշխավորվածությունը.

- իրավունքների ու ազատությունների սահմանափակման անթույլատրելիությունը, բացառությամբ միջազգային ակտերով և սահմանադրությամբ նախատեսված դեպքերի.

- մարդու և քաղաքացու՝ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ու ազատությունների իրավական և իրական երաշխավորվածությունը.

- մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների նկատմամբ ոտնձգությունների համար պաշտոնատար անձանց պատասխանատվության ինստիտուտների ստեղծումը և դրանց արդյունավետ գործառնությունը:

Այսպիսով, իրավական պետությունն իրենից ներկայացնում է պետական իշխանության կազմակերպման մի առանձնահատուկ ձև: Այն կառուցվում է անձի ու նրա զանազան հասարակական-քաղաքական և այլ միավորումների հետ միանգամայն նոր, իսկական ժողովրդավարական փոխհարաբերությունների արդյունքում՝ իրավունքի նորմերի հիման վրա և ի կատարումն դրանց: Ընդսմին, կարևոր է ընդգծել մի շատ էական հանգամանք՝ իրավունքը պետության մեջ առաջնային է դառնում լոկ այն դեպքում, երբ նա հանդես է գալիս որպես բոլոր քաղաքացիների, այլ ոչ թե հասարակության առանձին անդամների կամ միջնախավերի ազատության չափանիշ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Верховенство права. М., "Прогресс Универс", 1992
2. Коваленко А.И. Правовое государство: концепции и реальность. М., 1993
3. Лукашева Е.А. Правовое государство и обеспечение прав человека. М.,1990
4. Право и власть. М., "Прогресс", 1990
5. Энтин Л.М. Разделение властей: опыт современных государств. М., 1995
6. Боботов С.В., Васильев Д.И. Французская модель правового государства. "Советское государство и право", №1, 1990
7. Кудрявцев В.Н. Право в правовом государстве. "Социалистическая законность", №1, 1989
8. Мартышин О.В. Несколько тезисов о перспективах правового государства в России. "Государство и право", №5, 1996
9. Морозова Л.А. Правовое государство Украины: проблемы, перспективы развития. "Государство и право", №10, 1996
10. Мушинский В.О. Правовое государство и правопонимание. "Советское государство и право", №2, 1990
11.Соколов А.Н. Правовое государство. Идея, теория, практика. "Государство и право", № 11, 1995
12. Херманн Хорсткоттэ. Правовое государство как основной принцип Конституции /Конституция Германии выдержала испытание временем/. № 5, 1993